

լած ոսկեմետաղով կպցուած: Տուրիին ոտքերը ոսկիի տախտակին ձե-
ւաւորման ժամանակ ըստ պահանջուած շրջագծին կտրուած են ըզ-
գուշութեամբ: Այս ձեւով կազմուած է նաեւ կափարիչը եւ ազուց-
ուած տուրիին: Իսկ տուրիին յատակը ոսկի թիթեղին ձեւաւորումէն
ետք, ոտքերէն վեր, իր տեղը ոսկեմետաղով կպցուած է, աւարտելով
այդպէս տուրիը:

Ինչպէս ըսինք, աշխատութիւնը կատարուած է մեծ խնամքով եւ
վարպետութեամբ: Մուրճի թեթեւ հարուածներն իսկ երբեմն կըր-
նան ոսկին ծակել: Ոսկերիչ Սեդրակ կրցած է առանց ոսկին ծակո-
տելու, մըճահարելով կազմել թէ՛ պատկերազօծութիւնը, թէ՛ զար-
դերը եւ թէ՛ արձանագրութիւնները: Աշխատութիւնը յաջողութեամբ
աւարտած է շնորհիւ հայ վարպետին արհեստի հասկողութեան եւ
բարձր կարողութեան:

Ոսկետուրիը 1687 Նոյեմբեր 9ին շինուել աւարտելէ վերջ՝ չենք
զիտեր թէ ո՞ր եւ ո՞ր հայկական եկեղեցիի կամ վանքի մէջ պահ-
ուած է: Ոսկետուրիին յիշատակարանին մէջ ԲԱՐՍԱՆԱՄՈՒ ԱՆՏԻՕԲԱ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ յիշատակութիւնը զիս լուծումի մը չի առաջնորդեր
եկեղեցիին կամ վանքին ինքնութեան մասին:

Վերջապէս օր մըն ալ ոսկետուրիը կը հեռանայ իր հայ բնավայ-
րէն: Կը վերականգնուի գլխուն յունագիր սկզբնագրերով, Ս. Կոյսի
մարգարտաշար ոսկի կտրակով մը: Ո՛վ գիտէ ո՞ր կը տարուի, եւ
օր մըն ալ կ'անցնի Լոնտոն հրեայ ծանօթ հնավաճառի մը եւ անկէ ալ
Իսլանտայի մայրաքաղաքը Տըպլին՝ ուրիշ հրեայ հնավաճառի մը
ձեռքը կ'իյնայ եւ կը ծախուի:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅ ԳՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄՈՒԹ ԷԶԵՐԸ

Թէեւ հայ դրամագիտութեան ուսումնասիրութիւնը մօտ երեք
հարիւր տարուան հնութիւն ունի, պէտք է ընդունինք որ միայն վեր-
ջի քսան տարուայ ընթացքին է որ ան առարկայ եղած է լուրջ ու-
սումնասիրութեան: Շնորհիւ վերջերս կատարուած այս աշխատանք-
ներուն, կրնանք ըսել որ հայ դրամները եւ հայ դրամագիտութիւնը
իրենց պատուոյ տեղը սկսած են դրաւել միւս ազգերու դրամներու
կողքին:

Հակառակ այս իրողութեան՝ հայ դրամագիտութիւնը կոյս հող
մըն է դեռ եւ կարօտ քննութեան: Օրինակի համար՝ մեզի դեռ ան-
ծանօթ կը մնան բազմաթիւ կարեւոր դրամներ, որոնց դոյութիւնը
հաւանական է, բայց զանազան պատճառներով անոնք մէջտեղ չեն
հաւանական է, բայց զանազան պատճառներով անոնք մէջտեղ չեն
ուած են մատենագրութեան մէջ, բայց կա՛մ կորսուած եւ կա՛մ ուր
ըլլալին չի գիտցուի: Այս դրամները յատուկ կարեւորութիւն կը
ստանան՝ երբ անոնցմէ ուրիշ օրինակներ չեն գտնուած:

Այս յօդուածին մէջ պիտի յիշատակենք կարգ մը դրամներ, ո-
րոնք դեռ մեզի անծանօթ են եւ նաեւ ուրիշներ՝ որոնք կորսուած են
եւ զանոնք գտնելու մեր ջանքերը մինչեւ հիմա ապարդիւն եղած են:

Իր երեք հազարամեայ դոյութեան ընթացքին հայ ժողովուրդը
ապրած է իր անկախ, կիսանկախ եւ ոչ-անկախ ազգ մը: Այս դա-
րերուն ան ունեցած է բազմաթիւ իշխանութիւններ եւ թագաւո-
րութիւններ որ տիրած են Հայաստանի որոշ մասերուն վրայ: Ասոնց-
մէ ոմանք եղած են փոքր իշխանութիւններ եւ պարագաներու բեր-
մամբ դրամ չեն կոխած: Կան շրջաններ ալ, ուր եթէ մեր թագա-
ւորները դրամ կոխել տուած են, բայց անծանօթ մնացած են մեզի
եւ կա՛մ բնաւ չեն ուսումնասիրուած:

Այսպէս, չենք զիտեր թէ նախ-Աղեքսանդրեան շրջանին հայկա-
կան դրամներ կոխուած են թէ ոչ: Շատ կարելի որ այդ շրջանի

1. PAUL Z. BEDOUKIAN, A Survey of Publications on Armenian Nu-
mismatics from 1925 to 1963; *Revue des Etudes Arméniennes*, I, 1964,
pp. 415-426.

հայ արքայիկներ դրամ կոխել տուած են, բայց ներկայիս անոնք չեն ճանչցուած իբր հայկական դրամներ:

Հայ ժողովուրդը ունեցած է երեք դրամահատութեան շրջաններ եւ այս երեք շրջաններուն հայ թագաւորները դրամ կոխել տուած են կանոնաւորապէս: Կարծէ այս երեք շրջանի մութ էջերուն վրայ անդրադառնալ զատ զատ:

ԵՐՈՒԱՆԻԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Երուանդեան Հարստութեան պատմութիւնը վերջերս ուսումնասիրութեան ենթարկուեցաւ Թումանօֆի կողմէ², որ կու տայ հետեւեալ թագաւորներու ցանկը:

Ա. — Իշխած իբր սատրապ Հայաստանի

Երուանդ Ա. (Ք. Ա.) 401-344 (Orontes I)

Երուանդ Բ. (Ք. Ա.) 344-331 (Orontes II)

Բ. — Թագաւոր Հայաստանի

Երուանդ Բ. (Ք. Ա.) 331 (Orontes II)

Միհրան (Ք. Ա.) 331-317էն առաջ (Mithranes)

(Նէոպտոլեմոս, Սատրապ Ք. Ա. 323-321, Neoptolemus)

Երուանդ Գ. (Ք. Ա.) 317-260 (Orontes III)

Սամոս (Ք. Ա.) 260 (Samus)

Արշամ (Ք. Ա.) 260-228 (Arsames)

Քսերքսէս (Ք. Ա.) 228-212 (Xerxes)

Ապտիսարէս (Abdissares)

Երուանդ Դ. (Ք. Ա.) 212-200 (Orontes IV)

Գ. — Ծովի թագաւորներ

Զարեհ փոխարքայ (Ք. Ա.) 200, Արքայ (Ք. Ա.) 190 (Zariadres)

Միթրոպուզանէս (Mithrobuzanes)

Երուանդ Ե. (Ք. Ա.) 95

Ծովի թագաւորութեան վերջ դրաւ Մեծն Տիգրան, երբ Ծովքը միացուց Հայաստանի:

Այս շրջանի 13 թագաւորներէն միայն չորս հինգ հատի դրամ-

2. CYRIL TOUMANOFF, Studies in Christian Caucasian History, Georgetown University Press, 1963, pp. 277-354. Հայերէնի թարգմանուած «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ, 1966, թիւ 10-12, 495-518. 1967, թիւ 1-3, 75-96. թիւ 4-6, 195-218. թիւ 7-9, 355-378, թիւ 10-12, 485-512:

ները ծանօթ են մեզի: Հինգ Երուանդներէն ոչ մէկուն դրամ կրնանք վստահօրէն վերադրել, թէեւ կան որոշ թիւով Երուանդ անունով դրամներ, կոխուած Փոքր Ասիոյ մէջ: Անտարալիոյ, Ժամանակի ընթացքին պիտի կրնանք ապացուցանել՝ թէ այս դրամներէն ոմանք կը պատկանին հայ թագաւորներու եւ կամ փոխարքաներու: Երուանդ (Orontes) անուն կրող դրամներէն զատ, ծանօթ են դրամներ Արշամէն, Ապտիսարէսէն, Քսերքսէսէն եւ Զարեհէն:

Ներկայիս մօտ 30 հատ Երուանդեան դրամներ կը գտնուին զանազան թանգարաններուն եւ անհատական հաւաքածոներու մէջ: Օր նազան թանգարաններուն եւ անհատական հաւաքածոներու մէջ: Օր մը երբ կարելիութիւնը ստեղծուի հնագիտական պեղումներ կատարել պատմական Հայաստանի մէջ, այն ատեն բազմաթիւ Երուանդեան դրամներ մէջտեղ պիտի ելլեն եւ Երուանդեան Հարստութեան դրամները պիտի ուսումնասիրուին ամբողջովին:

ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Արտաշէսեան Հարստութիւնը (Ք. Ա. 200 - Ք. Ե. 12) կը ներկայացնէ երկրորդ շրջանը, երբ հայկական դրամներ կոխուած են կանոնաւորապէս: Արտաշէսեանները զօրաւոր էին եւ տէր՝ ընդարձակ հողերու: Անոնք կոխած են մեծաթիւ դրամներ, որոնցմէ շատ քիչերը հասած են մեզի: Այսօր հազիւ 300 Արտաշէսեան դրամներ ծանօթ են մեզի, բայց ներկայիս այնքան հետաքրքրութիւն ստեղծուած չէ՝ որ միշտ նորանոր դրամներ մէջտեղ կ'ելլեն եւ կրնանք յուսալ որ է՝ որ միշտ նորանոր դրամներ մէջտեղ պիտի բազմապատ-յաջորդ տասը տարիներու ընթացքին՝ այս թիւը պիտի բազմապատ-կուի:

Ուրախալի է որ, միայն վերջին քանի մը տարիներուն գտնուած նոր դրամները կարելիութիւն տուին Արտաշէսեան դրամները դասաւորելու³:

Արտաշէսեան թագաւորներու շարքը հետեւեալն է:

Զարեհ (Ք. Ա.) 189էն առաջ, ոչ թագաւոր

Արտաշէս Ա. (Ք. Ա.) 189-160, նախ կառավարիչ, յետոյ թագաւոր

Արտաւազդ Ա. (Ք. Ա.) 160-123

Տիգրան Ա. (Ք. Ա.) 123-96

3. PAUL Z. BEDOUKIAN, A Classification of the Coins of the Artaxiad Dynasty of Armenia, The American Numismatic Society, Museum Notes, 14 (1968), pp. 41-66, Pl. IX, X, XI. Տես նաեւ թարգմանութիւնը Պաուկեանի գրքին մէջ: ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ, Արտաշէսեան Հարստութեան դրամները, Վիեննա, Միթրաքեան տպարան, 1969, 118 էջ, 8 տախտակ:

Տիգրան Բ. Մեծն (Ք. Ա.) 95-56

Արտաւազդ Բ. (Ք. Ա.) 56-34

Արտաշէս Բ. (Ք. Ա.) 30-20

Տիգրան Գ. (Ք. Ա.) 20-8

Տիգրան Դ. (Ք. Ա.) 8-5 եւ 2- (Ք. Ե.)

Արտաւազդ Գ. (Ք. Ա.) 5-2

Երատոյ Թագուհի (իշխած Տիգրան Դ.ի հետ)

Տիգրան Ե. (Ք. Ե.) 6էն յերջ:

Այս 12 իշխողներէն ներկայիս միայն Արտաշէս Ա.էն եւ Արտաւազդ Ա.էն դրամներ չեն հասած մեղի: Անտարակոյս անոնց դրամներն ալ կը գտնուին շատ չանցած:

Հետաքրքրական է նկատել որ Հայ Մատենադրութեան մէջ Խորենացի⁴ կը գրէ թէ Արտաշէս Ա. «գրամ առանձին զիւր պատկերն հարկանէր»: Նոյնը կը կրկնէ Ասողիկ⁵: Նոր Հարստութիւն մը հաստատող զօրաւոր Թագաւոր մը անշուշտ իր անկախութիւնը պիտի յայտարարէր հատանելով դրամներ: Իսկապէս դրամանալի է որ իր դրամները դեռ մէջտեղ չեն ելած:

Արտաշէսեան դրամները դեռ պէտք ունին ուսումնասիրութեան եւ լուսարանութեան: Այս շրջանի դրամներէն շատերը սխալ ճանչցուած են եւ տրուած այս կամ այն Թագաւորին, առանց փաստերու դոյուլեան: Այս հարստութեան զիտական դասաւորումը դեռ ժամանակի կարօտ է, եւ հոս չ'արժեք այս խնդրին անդրադառնալ: Կ'արժէ սակայն ուղղել քանի մը սխալներ, որ մտած են մատենադրութեան մէջ:

Արտաշէսեան դրամներու մասին երկարօրէն գրած է Ատրպետ, «Աղգադրական Հանդէս»ին մէջ: Տիգրանեան դրամներու շարքին ան կը խօսի Տիգրան Բ.ի երկու դրամներու մասին, որոնք արժանի են քննութեան: Այսպէս յիշելով «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ պատկերացուած եւ նկարագրուած դրամ մը⁶, Ատրպետ⁷ կը յայտարարէ թէ ասոր վրայի գրութիւնը ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΥ է, եւ հետեւաբար ապացոյց թէ Արտաշէսեանները Պարթեւներէն սերած էին: Այս եզրակացութիւնը բոլորովին սխալ է եւ դժբախտաբար Ատրպետ ճիշտ չէ կարգացած այս դրամին վրայի գրութիւնը: Իսկութեան մէջ ասիկա արժաթ դրամ մը չէ, այլ պղինձ, եւ վրայի գրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ: Արդէն «Հանդէս

4. Մովսէս Խորենացի, Պատմութիւն, Հտ. Բ, գլուխ ԺԱ:

5. ԱՍՈՂԻԿ, Արշակունեաց Բագաւորներ, Ա. մաս, գլուխ 5:

6. Հանդէս Ամսօրեայ, Ապրիլ 1905, էջ 98 եւ էջ 102, պատկեր 7:

7. ԱՏՐՊԵՏ, Ազգագրական Հանդէս, 1913, էջ 219, թիւ 27 դրամ:

Ամսօրեայ»ի յիշատակած Collection Theodor Prower Մոսկուա, Wien 1904, թիւ 1520, դրամը⁸ կը տեսնենք որ մեր ըսած դրամն է եւ ΑΡΣΑΚΟΥ գրութիւն չկայ վրան: Այս դրամն ալ ծախուեցաւ Պե-տրովիչի աճուրդին մէջ⁹ 1926ին: Ըսենք նաեւ որ այս դրամէն քանի մը հատ գոյութիւն ունին զանազան հաւաքածոներու մէջ¹⁰:

Ատրպետ երկարօրէն կը խօսի նաեւ Տիգրան Մեծի ոսկեդրամի մասին: Սակայն յայտնի եղաւ որ Ատրպետի նկարագրած եւ իշխում-ծին գտնուած ոսկեդրամը կեղծ է, ինչպէս նաեւ կեղծ են մեղի ծանօթ վեց ուրիշ Տիգրան Մեծի ոսկիները¹¹: Չենք կրնար սակայն վըստահաբար ըսել թէ Տիգրան ոսկի դրամ չէ կոխած, որովհետեւ Տիգրանի դաշնակիցը եւ աները, Պոնտոսի Միհրդատ Եւպատորը կոխած է ոսկի դրամներ, եւ Տիգրան ըլլալով աւելի հարուստ եւ ախած է ոսկի դրամներ, եւ Տիգրան ըլլալով աւելի հարուստ եւ ախած է ոսկի դրամներ, հետեւած է անոր օրինակին: Թերեւս օր մը Տիգրանի ոսկի դրամը մէջտեղ ելլէ:

Արշակունեաց դրամներու մեր տողերը վերջացնելէ առաջ՝ ըսենք, որ մեր կարծիքով շուտով մեծաթիւ դրամներ մէջտեղ պիտի ելլեն, որ որովհետեւ այլեւս այս դրամները բոլորին ալ ծանօթ են, քանի որ անոնց պատկերները հրատարակուեցան Ամերիկեան Դրամագիտական Միութեան Պարբերաթերթին մէջ¹², եւ այսպէս մատչելի եղան բոլոր դրամագիտներուն եւ դրամավաճառներուն: Գիտութիւնը եւ ստեղծուած պահանջը հարկաւոր նոր դրամներ մէջտեղ պիտի բերեն շուտով:

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Կիլիկեան Հայաստանի դրամները բաւական ուսումնասիրուած են¹³ եւ ծանօթ դրամներու թիւը այսօր 30.000ը կ'անցնի: Հակառակ այս իրողութեան, դեռ կը մնան որոշ կէտեր, որ կը կարօտին լուսարանութեան:

Միայն վերջերս յայտնի եղաւ որ Կիլիկիոյ Հայ իշխանները դրամ կոխած են, եւ կարելի եղաւ ծանօթ դրամները մասամբ դասաւորել¹⁴:

8. B. EGGER SALE, 1904, Vienna, թիւ 152:

9. PETROWICZ SALE, Naville Catalog XII, Geneva, 1926.

10. ՀԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ, Արտաշէսեան Հարստութեան դրամները, Վիեննա, Մի-թրեան տպարան, 1969, էջ 50, թիւ 19:

11. PAUL Z. BEDOUKIAN, Gold Forgeries of Tigranes the Great of Armenia, American Numismatic Society, Museum Notes, 1964, 303-307, Pl. XLIX.

Տես ծանօթ. (10) էջ 82-90:

12. Տէ'ս ծանօթ. 3:

13. PAUL Z. BEDOUKIAN, Coinage of Cilician Armenia, American Nu-

Հայ Պարոններուն դրամներն ալ վերջերս սկսած են գտնուիլ Արտաշէսեան դրամներուն պէս, եւ շատ չանցած կարելի պիտի ըլլայ այս շրջանի դրամներն ալ դասակարգել դիտականօրէն:

Նոյնքան կարեւոր եւ գոհացուցիչ պիտի ըլլայ կիլիկեան թագաւորներուն ոսկեդրամներու ուսումնասիրութիւնը, եթէ ոչ բոլորին՝ դոնէ առաջին քանի մը իշխողներուն: Բաղձալի է ունենալ թագաւորական ոսկեդրամներու շարք մը: Ռուբինեան ոսկեդրամները չքաղբամներ են եւ ոչ թէ շրջաբերութեան համար կոխուած ոսկիներ: Գիտենք որ Լեւոն Ա. կոխել տուած է երկու տեսակ ոսկի դրամներ¹⁵: Անոր յաջորդը՝ Հեթում Ա. կոխեց Հեթում Ա. - Լեւոն Ա. ի միասնական ոսկեդրամը: Յաւալի է որ Լեւոն Բ. ին ոսկեդրամը չկայ ներկայիս, բայց գիտենք որ ան ալ ոսկի կոխած է եւ ասկէ օրինակ մը դժբախտաբար կորսուած է Բերայի 1831ի հրդեհին մէջ¹⁶: Իսկապէս մեծ կորուստ մը հայ դրամագիտութեան համար:

Լեւոն Բ. ի յաջորդը՝ Հեթում Բ., որոշ պատճառներով չկոխեց նոյնիսկ արծաթ դրամներ, եւ պէտք չէ սպասել որ ան ոսկի դրամ կոխած ըլլայ:

Սմբատ թագաւոր իր երկու տարուան տիրապետութեան ընթացքին կոխեց թէ՛ օծման եւ թէ՛ հասարակ արծաթ դրամներ եւ նաեւ պղինձներ: Սպասելի է որ ան ալ ոսկի չքաղբամ կոխած ըլլայ, բայց մինչեւ այսօր այս տեսակ դրամ մը չէ յայտնուած: Թերեւս օր մը անոր ոսկեդրամը մէջտեղ ելլէ:

Շատ քաջալերելի է տեսնել Սմբատի յաջորդ Կոստանդին Ա. ի ոսկեդրամները: Կոստանդինի նշանաւոր ոսկեդրամը շատոնց է կը պահուի Վենետիկի Միսթարեան թանգարանը եւ կը պատկանէր Հ. Ղեւոնդ Ալիշանի հօր Պետրոս Մարգար Ալիշանին († 1834): Նոյն տե-

mismatic Society, Numismatic Notes and Monographs No 147, New York, 1962.

ԶԱՐԵՀ Պ. ՊՏՈՒԿԵԱՆ, Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, Միսթարեան տպարան, 1963:


14. PAUL Z. BEDOUKIAN, *Coins of the Baronial Period of Cilician Armenia* (1080-1198), The American Numismatic Society, Museum Notes XII (1966), pp. 139-145, Pl. XLI.

Զ. ՊՏՈՒԿԵԱՆ, Ռուբինեան իշխաններու դրամները, «Հանդէս Ամսօրեայ», 1965, Ապրիլ-Յունիս, էջ 261-270:

15. PAUL Z. BEDOUKIAN, *Armenian Gold Coins of the Roupenian Dynasty*, The American Numismatic Society, Museum Notes X, 1962, pp. 113-120, Pl. XXV.

Զ. ՊՏՈՒԿԵԱՆ, Կիլիկիոյ հայ քաղաւորներու ոսկեդրամները, «Հանդէս Ամսօրեայ», 1960, Յունուար-Մարտ, էջ 16-27:

16. Հ. ԿՂԵՄԷՍ Վ. ՍԻՊԻԼԵԱՆ, Գասաւորուքիւն Ռուբինեան դրամաց, Վիեննա, Միսթարեան տպարան, 1892, էջ 13 եւ 33, պատկեր 18:



Զանազան շրջաններէ մեզի հասած հայկական դրամներու նմոյշներ

սակ ոսկի մը գտնուեցաւ նաեւ Պոլսոյ Թանգարանին մէջ¹⁷։ Վենետիկի ոսկեղրամը ծանօթ էր թէ՛ Langloisի¹⁸ եւ թէ՛ Սիպիլեանի¹⁹։

Շատ հետաքրքրական է կարդալ երկրորդ Կոստանդին ոսկեղրամի մը մասին Բասմաջեանի²⁰ գրքին մէջ։ Դժբախտաբար Բասմաջեան որեւէ ակնարկութիւն չ'ըներ թէ որո՞ւ կը պատկանի այս դրամը եւ որո՞ւ է։ Գիտենք սակայն՝ որ Բասմաջեանի գրքին գծագրութիւնները առնուած են Morganի գրքէն²¹, եւ այս վերջին գրքին մէջ ալ կը տեսնենք Բասմաջեանի երկու ոսկեղրամներու գծագրութիւնները։

Ուրեմն Կոստանդինի երկրորդ ոսկեղրամին առեղծուածը պէտք էր փնտռել Morganի դիւաններու մէջ։ Երբ 1968ին Փարիզ կը գլտնուէր՝ այս խնդիրը հետապնդեցի եւ հասկցայ որ անոնք պահուած են Լուվրի Թանգարանին մէջ։ Լուվրի դիւանապետ Պր․ L. Carolus-Barré քննեց Morganի թուղթերը եւ ինծի տեղեկացուց թէ Histoire du Peuple Arménienի գրքին ձեռագիրը իրենց քովը չէ եւ թելադրեց որ դիմեմ Morganի ժառանգորդներուն։ Այս ալ չյաջողեցաւ եւ Փարիզաբնակ Պր․ Հ․ Սամուէլեան ինծի գրեց թէ իրենք ալ ատենք Morganի ժառանգորդները փնտռած են եւ չեն գտած։ Այսպէս Կոստանդին Ա․ի երկրորդ ոսկեղրամի ուր ըլլալը յայտնի չեղաւ եւ այս առեղծուածին լուծումը Շէրլոք Հոլմսի հանելուկի մը հանգամանքը ստացաւ։ Այս խնդիրը արժանի է հետապնդումի։

Նորէն քննելով Վենետիկի եւ Պոլսոյ ոսկեղրամները՝ հաստատուեցաւ որ երկուքն ալ նոյն կնիքէն առնուած են, բայց տարբեր կլորակներու վրայ զարնուած։ Langloisի²² գծագրութիւնը առնուած է Վենետիկի դրամէն, բայց կը տեսնենք որ գծագրութիւնը հարազատ չէ եւ սխալ կը ներկայացնէ դրամը։ Սիպիլեանի գծագրութիւնը²³ նոյնպէս առնուած Վենետիկի դրամին վրայէն, կը տարբերի Langloisի գծագրութենէն, բայց նորէն սխալ է եւ հարազատօրէն չի ներկայացներ դրամը։ Նոյնպէս Բասմաջեանի (Morganի)²⁴ նկարը սխալ կը ներկայացնէ դրամը եւ կը տարբերի միւս երկուքէն։ Այնպէս կ'երեւի թէ այս գծագրութիւնները իրարմէ ընդօրինակուած են եւ սրբանի թէ՛ այս գծագրութիւնները իրարմէ ընդօրինակուած են եւ սրբանի թէ՛ իրարմէ ընդօրինակուած։ Անշուշտ փորագրիչին հայագէտ-դրա-

17. Տե՛ս Ծանօթ. 15։

18. VICTOR LANGLOIS, Numismatique de l'Arménie au Moyen Age, Paris, 1855.

19. Տե՛ս Ծանօթ. 16։

20. Կ․ Յ․ ԲԱՍՄԱՋԵԱՆ, Հայկական ընդհանուր դրամագիտութիւն, Վենետիկ, Միխայիլեան տպարան, 1936, էջ 164։

21. JACQUES DE MORGAN, Histoire du Peuple Arménien, Paris, 1919.

22. Տե՛ս Ծանօթ. 18։

23. Տե՛ս Ծանօթ. 16։

24. Տե՛ս Ծանօթ. 20։

ԽԱՉԱԿԻՐ (ԵՒ ՀԱՅ?) ՈՍԿԻ ԴՐԱՄՆԵՐ

Թուրքիական դրամներու մասին խօսած ատեննիս չենք կրնար անտեսել չարք մը ոսկեդրամներ, որ ժամանակակից խաչակիրներուն վերագրուած են: Դրամագիտական աշխարհին ծանօթ են կարգ մը ոսկի դրամներ, որոնց վրայ կը տեսնուի սուտ-արաբական (pseudo-eufic) անընթեռնի դրութիւններ: Կան օրինակներ, որոնց վրայ կը տեսնուին լատիներէն գրեր, խաչ եւ նոյնիսկ արաբերէն գրով քրիստոնէական նախադասութիւններ: Այս դրամները բաւական մանրակիւծ են ուսումնասիրուած են դրամագէտներու կողմէ²⁸:

Զարմանալի է որ այս բազմաթիւ ուսումնասիրութեանց մէջ բընաւ խօսք չէ եղած թէ այս խաչակիր ոսկի դրամներէն ոմանք կրնան կոխուած ըլլալ Կիլիկիոյ մէջ Վենետիկցիներու կողմէ, ինչպէս անոնք դրամ կը կոխէին Աքքայի եւ ուրիշ խաչակիր շրջաններու մէջ:

Կը տեսնենք սակայն որ հայ թագաւորներ մօտ հարիւր տարուայ ընթացքին մասնաւոր հրովարտակով առանձնաշնորհումներ տուած են Վենետիկցիներու, որոնց մէջ միշտ կը շեշտուի թէ Վենետիկցիք կրնան ոսկի եւ արծաթ ներածել Կիլիկիա առանց մաքս վճարելու, ի բաց առեալ եթէ այդ ոսկին եւ արծաթը գործածուի դրամահատութեան համար: Այդ պարագային անոնք պիտի վճարէին նոյն մաքսը, ինչ որ կը վճարէին Աքքայի մէջ: Այս իմաստով հրովարտակներ հանած են Հեթում Ա. (Մարտ 1245), Լեւոն Բ. (Յունուար 1271), Լեւոն Գ. (Մայիս 30, 1307) եւ Լեւոն Դ. (Մարտ 1, 1321)²⁹:

Ստիպուած ենք հարցնել. եթէ Վենետիկցիք դրամ չկոխեցին Կիլիկիոյ մէջ, ինչո՞ւ համար ամբողջ հարիւր տարի անոնք իրաւունքը ստացան դրամ կոխելու, հոգ չէ թէ մաքս վճարելով, այս նպատակին համար իրենց բերած ոսկին:

Ասկէ զատ կ'արժէ քննել Այասի բաժնետան վերաբերեալ նօտարական վաւերացութիւն³⁰, որոնք 1274 եւ 1279 տարեթիւերը կը կրեն: Այս վաւերացութիւններուն մէջ բազմաթիւ անգամ կը յիշատակուի bis-

28. G. SCHLUMBERGER, *Numismatique de l'Orient Latin*, Paris, 1878.
P. BALOG et S. YVON, *Monnaies à Légendes Arabes de l'Orient Latin*, Revue Numismatique, Paris, 1958, p. 133-168, Pl. XI-XVI.
GEORGE C. MILES, *Some Hoards of Crusader Bezants*, American Numismatic Society, Museum Notes, 13, 1967, pp. 189, 203, Pl. XLI-XLIV.
29. VICTOR LANGLOIS, *Cartulaire de la Chancellerie Royal des Roupéniens*, Venise, 1863, pp. 143, 151, 169, 182.
30. C. DESIMONI, *Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois*, Archives de l'Orient Latin, Paris 1881, pp. 434-534.

sancio sarracinati d'Armenie դրամը ուրիշ խաչակիր ոսկիներու (bissantios sarracinales Acconis) եւ արաբ ոսկիներու (bissantios sarracinales ad pondus Syrie) կարգին, այսպէս յայտարարելով թէ այս հայկական ոսկիները իսկական դրամներ են:

Բայց ո՞ւր են այս bissantio sarracinale d'Armenie, այսինքն Հայաստանի սարակիմոսեան բիզանդ կոչուած ոսկի դրամները: Եթէ իսկական դրամներ էին, այն ատեն անոնք ճանչցուած չեն եւ ներկայիս կը նկատուին խաչակիր ոսկիներ: Այնպէս կ'երեւի թէ այս թեմէն կախուած է: Տարակոյս չկայ որ ժամանակի ընթացքին այս հանելուկն ալ պիտի լուծուի:

ԿՈՐԻԿԵՒ ՊՂԻՆՁԷ ԴՐԱՄԸ

Կորիկէի Պղինձէ դրամները շատոնց ծանօթ են դրամագէտներուն եւ անոր մասին գրած են Brosset³¹, Langlois³², Բասմաջեան³³, Սիպիլեան³⁴ եւ Մովսէսեան³⁵:

Աւելի վերջերս այս դրամէն օրինակ մը եւս գտնուեցաւ³⁶ եւ երկար ուսումնասիրութիւն մը հրատարակուեցաւ Langի³⁷ կողմէ 1954ին: Lang նկատի առնելով պատմական դէպքերը, եկաւ այն եզրակացութեան թէ այս դրամը կը պատկանի Կորիկէ Բ. ի որ իշխեց 1048-1100 թուականներու ընթացքին:

Այս հարցը լուծեալ կը սեպուէր երբ 1962ին Grierson³⁸ նորէն քննութեան ենթարկեց այս դրամները եւ հիմնուելով դրամին գեղ-

31. M. BROSSET, *Monographies des Monnaies Arméniennes*, (Bull. hist.-phil. de l'Académie des Sciences de St. Pétersbourg, VI, 1840), pp. 29, Pl. I, 1.
32. Տե՛ս ծանօթ. 18:
33. Տե՛ս ծանօթ. 20:
34. Տե՛ս ծանօթ. 16:
35. Հ. Ղ. ՄՈՎՍԷՍԵԱՆ, Կիլիկիան բագաւորութեան պատմութիւնը, Վիեննա, 1923, Միթարեան տպարան:
36. PAUL Z. BEDOUKIAN, *A Rare Armenian Coin*, The American Numismatic Society, Museum Notes, V, 1952, 181-4, Pl. XXIV, 5-6.
37. DAVID M. LANG, *Supplementary Notes on Kiurike II King of Lori in Armenia and His Coins*, American Numismatic Society, Museum Notes, VI (1954), 183-91, Pl. XIX, 3-6.
38. PHILIP GRIERSON, *Kiurike I or Kiurike II of Lori - Armenia?* A Note on Attributions, American Numismatic Society, Museum Notes, X, 107-112.

